

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՌՌԻՍԱՑ ԵԿԵՂԵՑԻ

Ժողովրդական դժբախտութիւն: Սոյն տարուայ փետրվարին Պետական Դումայում լուրջ խորհրդակցութեան խնդիր էր դարձել արբեցողութեան դէմ կոուելու օրէնսգիրքը: Այս մասին «Եկեղեցական-հասարակական-համաբաւարները» գրում է. «Ժողովրդական մեծ չարիքի դէմ մղելու կոուել միշտ ներկայացել է եկեղեցու հոգացողութեան առարկան: Դեռ Առաքեալի ժամանակից սկսած, երբ քարոզել է «մի արբենայք զինւով»՝ միշտ եկեղեցու պաշտօնեաների համար դարձել է պարտաւորական յիշեցնել հաւատացեալներին այդ պատուիրանի մասին: Քանի որ արբեցողութիւնը մի արատ է, քայքայող հոգին և մարմինը, ուստի մարդկային հոգիների հովիւներին առաջին պարտքն է ոչնչացնել այն: Մեր ժամանակում ոչ ոք էլ չէ կասկածում, որ արբեցողութիւնը հոգևորականութեան շատ մօտիկ վերաբերուող հարց է: Հոգևորականութիւնը արդէն վաղուց կոչուած է եռանդուն մասնակցութիւն ունենալու ժողովրդի արբեցողութեան դէմ կոուելու հոգացողութեանց մէջ, իսկ վերջին ժամանակներս եկեղեցական իշխանութիւնը յատուկ ուշադրութիւն է դարձրել հոգևորականութեան գործունէութեան այդ կողմի վրայ: Բայց արբեցողութեան դէմ կոուել, հարկաւ, միայն հոգևորականութիւնը անզօր է: Նա ներկայ դէպքում միայն կարող է ցոյց տալ որոշ օգնութիւն հասարակութեան ու պետութեան: Ուստի հասարակական և պետական կոուելի միջոցները են ուղիղ կապակցութեան մէջ եկեղեցական էական խնդիրների հետ:

Դժբախտաբար, Դումայի նախաձեռնութեամբ բարձրացուած նորա օրինադի պատմութիւնը, ոգելից խմիչքների վաճառուի սահմանափակելու մասին, ոչ պետութիւնը և ոչ էլ հասարակութեան որոշ մասը չէ գիտակցում և չէ էլ ցանկանում գիտակցել ներկայ գործի ամբողջ կարևորութիւնը:

Արբեցողութիւնը չարիք է: Սկզբունքով բոլորն էլ համաձայն են սորա հետ: Ալգոհոլի գործածութիւնը քայքայիչ կերպով ներգործում է օրգանիզմի վրայ, թէկուզ և ամենաքիչ չափի գործածութիւնը: Մշտական և մանաւանդ ոչ չափաւոր գործածութեան հետևանքները լինում են չափազանց տխուր: Շատ հիւանդութիւններ, որոնք տանջում ու մաշում են ներկայ մարդկութիւնը, առաջ

են զալիս ալգոհուլից: Ալգոհուլի ազգեցութեան ներքոյ մարդս կորցնում է իւր կենսունակութիւնն ու գործելու ընդունակութիւնը և ունենում է իւր այդ ազգեցութիւնը ժառանգաբար: Արբեցողութեան տնտեսական հեռանկարները ժողովրդի մէջ ոչ պակաս սարսափելի են: Մեր հասարակ ժողովուրդը, գիւղացիներն ու բանուորները, ինչպէս յայտնի է, չգիտեն չափը, երբ խմում են: Գիւղացին և բանուորը իրենց արբեցողութեան տալով՝ պատրաստ են խմել մինչև վերջին կողէկը, մոռանալով և՛ ընտանիքը և՛ վաղուան օրը: Տօն օրերը, ընտանեկան հանդիսաւոր օրերին բոլորն են անհրաժեշտ համարում խմել և հիւրասիրել ուրիշներին: Օղու համար իրենց խղճուկ տնտեսութիւնից տասնեակ ուրլիններ են ծախսում: Արբեցողութեան հետ միասին զարգանում է ժողովրդի մէջ ոճրագործութիւնը, զոդութիւնը և առհասարակ բարքերի անկումը:

Թւում է՝ որ պետութիւնը միջոցների կըդիմէ արբեցողութեան դէմ կռուելու, ի նկատի առնելով նորա պատճառած մեծ չարիքները, բայց դժբախտաբար այդ հոգացողութիւնը պետութեան կողմից չէ նկատուում և չեն էլ աջակցում Պետական Դումայի այն օրէնսդէին, որով արուած է մի շարք սահմանափակումներ արբեցողութեան տարածման առաջն առնելու համար, երևի նորա համար, որ ոգելից խմիչքների մենավաճառութիւնը պետութեան տալիս է զուտ արդիւնք տարեկան մինչև կէս միլիարդ ուրլիս (Շրջանառութեան ընդհանուր գումարն է 950 միլիոն):

Այդպիսի պայմաններում հոգևորականութեան դերը—կռուել արբեցողութեան դէմ—զառնում դժուարին, բայց և պատասխանատու: Այստեղ հոգևորականութիւնը պէտք է ամեն ջանք գործ դնի համոզելու հեղինակաւոր մարդկանց կռուելու ժողովրդական այն մեծ չարիքի դէմ, որ կոչուում է արբեցողութիւն: Այս հարցում հոգևորականութիւնը պէտք է ունենայ իւր հեղինակաւոր ձայնը և ներգործական դերը:

Ռուսաստանում արբեցողութեան դէմ մեծ կռիւ է մղել յայտնի մանկավարժ և հասարակական գործիչ Բաչինսկին: Սա յատկապէս ժողովրդի մէջ մարդկութեան այդ վնասակար ախտի դէմ կռուելու համար թողեց իւր պրօֆեսսօրական ամբիոնը ու զնայ գաւառները, որտեղ հիմնեց բազմաթիւ ընկերութիւններ—յատկապէս կռուելու արբեցողութեան դէմ: Հետզհետէ իւրաքանչիւր ընկերութիւն ունենում էր հարիւրաւոր անդամներ—ոչ խմողներ: Բաչինսկին իւր նամակների մէջ հերքում էր ժողովրդի մէջ տարածուած այն սխալ կարծիքը, որ ասում էին թէ ալգոհուլը օգտակար է իրրև տաքացնող միջոց: Գիտական հիմունքներով նա բացատրում է ժողովրդեան՝ որ այգեձօլն ոչ միայն չէ տաքացնում մարմինը,

այլ բնյհակառակը ցածացնում է արեան երակների տաքութեան աստիճանը: Եւրոպայի քիչամ ընթացած ժամանակներին

Սխալ է և մտածել, որ նա սնունդ է պարունակում: Այն նիւթերը, որոնք սնունդ են պարունակում՝ շուտ էլ մարում են ստամոքսում, մինչդեռ որպէսզի ստամոքսը մարսի ալգոհոլը, պէտք է 16 ժամ աշխատանք գործ դնի:

Ալգոհոլի պատճառած վնասները չափազանց մեծ են: Մարդու օրգանը քայքայւում է ալգոհոլից, տեսողութիւնը և լսողութիւնը թուլանում է, մարմնի որոշ մասերը դողում է, դէմքը ստանում է վատասողջ տեսք: Սնանկարւում է հոգեկան վիճակը, թուլանում է կամքը: Սաստիկ արեցողները բոլորովին դուրկ են կամքից: Բայքայւում է մարդու շղային դրութիւնը: Շատ անգամ սպացուցուած է, որ հոգեկան քայքայուած վիճակը առաջ է գալիս ոգեկից լամիչքներից: Ալգոլիսաների սերունդը մտաւորի կողմից լինում է անզարգացած և երբեմն էլ հասնում է ապուշութեան: Բայց որքան աշխարհական մարդիկ արեցողութեան շնորհիւ կորցնում են իրենց դիրքը հասարակութեան մէջ՝ աւելի ևս հոգևոր անձինք, որոնք նոյնպէս վարակւում են այդ ախտով: Որքան սարսափելի է այն տեսարանը, երբ հոգևորականը հարբած վիճակում երևում է ժողովրդի մէջ և նոյն իսկ Աստուծոյ տաճարում: Ի՛նչպիսի մեծ գայթակղութիւն է ներկայացնում նա իւր անձով ժողովրդի համար: Այդպիսի ժամանակ աշխարհականը նայելով հոգևոր պաշտօնեայի վրայ կորցնում է իւր ունեցած կրօնական ջերմեռանդութիւնը: Սոցա հետևանքն էլ լինում է այն, որ ժողովուրդը սառչում է եկեղեցուց: Բաշինակին իւր մարդկանցով ձեռք առաւ զանազան միջոցներ կուուելու արեցողութեան դէմ: Այդ միջոցներից ամենագլխաւորն է տարածել ուսումը ժողովրդի մէջ: Որքան որ ժողովուրդը լուսաւորուի, նոյնքան և կը հասկանայ արեցողութեան պատճառած վնասները: Ահա և այս տեսակէտից մեծ է ուսուցչի և քահանայի դերը, որ ձեռք ձեռքի տուած կռիւ մղեն արեցողութեան դէմ: Մի քանի երկրներում ըացարձակ կերպով գործ չեն ածում ալգոհոլը: Փինլեանդիայում, Հիւսիսային Ամերիկայի մի քանի նահանգներում ալգոհոլը միայն կարելի է գտնել դեղատներում. ուրիշ տեղ չեն վաճառում: Եւ այդ երկրներում ժողովուրդը աւելի զարգանում և ազատ է մնում զանազան քայքայիչ արատներից:

Եկեղեցիների և վանքերի թիւր Ռուսաստանում եւ եկեղեցիների Բիւրգիե, Համաձայն 1912 թ. հաշուի կայսրութեան մէջ եղել է 53546 եկեղեցի, որոնց թւում 747 մեծ տաճար (соборъ), 2007

վանք, 2537 եկեղեցի տնային, 2143 զերեզմանատան, 5204 կից եկեղեցիներ, մնացածն ծխական: Նորից կառուցուած է 626, որից մէկը մեծ տաճար, 11 վանք, 38 տնային և զերեզմանատան:

Վերջին տեղեկութիւնների համաձայն վերջին 3 տեսակի եկեղեցիները ունեցել են 129,536 զեսեատին հող, չհաշուելով հոգևորականներին տրուած հողերը: Հողերից և այլ յօդուածներից եկամուտ է եղել 1912 թուին 3,985 հազար ռուբլի: Անձեռնմխելի գումար այդ թուին եղել է 62,649 հազար ռուբլի, $\frac{0}{100}$ $\frac{0}{100}$ այդ գումարից ստացուած է 2,115 հազար ռուբլի, հետևապէս $4\frac{0}{100}$ -ից քիչ, ըստ երևոյթին գումարի մի մասը մնացել է առանց շահեցնելու: Մոմի անտուրից գոյացել է 15,355 հազար ռուբլի, աւելի կը գոյանար, եթէ վերահսկողութիւնը խիստ լինէր եկեղեցու երէցփոխների վրայ, որոնք զիտեն չգրուած գումարները վերցնել:

Գանձանակադրամներ գոյացել է 5,792 հազար ռուբլի, նկատուում է հետզհետէ պակասումն այս մուտքի: Նուիրաբերութիւնը ցոյց է տրուած 7,497 հազար ռուբլի, և զանազար մանր ու պատահական մուտքեր 4,795 հազար ռուբլի: Այսպիսով 1911 թ. մնացորդ 4,314 հազար ռուբլի գումարի հետ եկեղեցիների տրամադրութեան տակ եղել է 43,853 հազար ռուբլի, բացի տոկոսաբեր թղթերից: Վերոյիշեալ գումարի վրայ պէտք է աւելացնել նաև շինարարական նպատակով գանձարանից բաց թողած գումար 995 հազար ռուբլի, որից առաջնորդական տների և կոնսիստորիանների նոր շինութեանց ու վերանորոգութեանց վրայ ծախսուել է 402 հազար ռուբլի: Մինչդեռ 72 միլիոն ռուբլի թոյլատրուած է ծախսել Միբիրում և Միջին Ասիայում եկեղեցիներ շինելու համար: Ուրեմն բոլոր եկեղեցիների եկամուտի գումարը կարելի է հաշուել 45 միլիոն ռուբլուց աւելի:

Ծախուց գումարը: Եկեղեցիների ծախսերը կարելի է բաժանել երկու մասի, ընդհանուր և տեղական, ծխական: Առաջինին վերաբերուում են այն ծախսերը, որոնք լինում են դպրոցական հաստատութիւնների, կոնսիստորիանների համար, նիւթական օգնութիւն թեմական հոգաբարձութեանց և առանձին անհատների: Այսպէս 1912 թ. հոգևոր դպրոցական հաստատութիւնների համար վերցուած է եկեղեցիների եկամուտներից 5,517 հազար ռուբլի, եկեղեցական-ծխական դպրոցների համար 1,546 հազար ռուբլի, կոնսիստորիանների զբքերի և այլ տեսակ ծախքերի համար 9,279 հազար ռ., կոնսիստորիանների համար 487 հազար ռուբլի, այսպիսով առաջին տեսակի ծախսերի համար գործադրուել է 16,829 հազար ռուբլուց ոչ պակաս, կամ $40\frac{0}{100}$: Երկրորդ կարգի ծախսերի համար գործադրուել է եկեղեցիների և եկեղեցական առանց պահպանութեան և վերանորոգութեանց համար 18,229 հազար ռուբլի,

զգեստատանց վերանորոգութեան և եկեղեցական զգեստի վրայ ծախսուել է 2,074 հազար ուրբլի, կարմիր գինու (պատարագի բաժակ) ձէթի խունգի և նշխարքի համար ծախսուել է 3,295 հազար ուրբլի, ապահովագրութեանց համար 1,642 հազար ուրբլի, իսկ ընդամենայն 25,240 հազար ուրբլի կամ 60⁰/₀ 2,074 հազար ուրբլի եկեղեցիների բարեկարգութեան համար, այսինքն իւրաքանչիւր եկեղեցու վրայ միջին թուով մօտ 48 ուրբլի, աւելի պակաս, քան կարմիր գինու (բաժակ) համար արուած ծախսը միջին թուով իւրաքանչիւր եկեղեցու հաշուին:

ԲՈՂՈՒՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՅԻ

Աստուածաւելի բարածուր 1913 թուին: Աստուածաշնչի Ամերիկեան ընկերութիւն ունի Եգիպտոսի մէջ 26 գրավաճառ, Պուկարիոյ մէջ 5, Թուրքիոյ մէջ 52, որոնք ճանապարհորդել են 71000 մղոն: Նորա ցրել են 10,790 Աստուածաշունչ, 45,023 Նոր Կտակարան, 47,023 ս. Գրքի մասեր, ընդամենայն 76,379 օրինակ: Սպառուած օրինակների թիւն է ամբողջ 1913 թուի մէջ 179,460, Իրենց հրատարակութեան օրից սկսած մինչև 1913 թ. դեկտ. 31-ը յիսուն և վեց տարուան մէջ տարածել են 3,489,308 օրինակ: Լեզուական կողմից վերցրած—նորա տարածել են Հայերէն 23,057, Հայաստան Տաճկերէն 13,416. Յունարէն 7,579. Յունաստան Տաճկ. 4,370, Պոլկարերէն 14,203, Տաճկերէն 10,727, Արաբերէն 89,973, Անգլիերէն 4,144 օրինակ: Մնացածները այլ լեզուներով:

1912 թ. աշխարհի բոլոր Աստուածաշնչի ընկերութիւնների հրատարակած օրինակների թիւը.

Ամերիկեան ընկերութիւն	.	.	4,104,008	օրինակ
Բրիտանական	»	.	10,400,229	»
Փրանսիական	»	.	40,695	»
Գերմանական	»	.	1,014,230	»
Հոլանդական	»	.	85,757	»
Սկանդինավական	»	.	152,898	»
Պելճիական	»	.	51,494	»
<hr/>				
Ընդամենայն				15,849,311

Բ. Վ. Ա.